

բերի զնորա բանս ի վկայութիւն, ոչ առանց սրբադրութեան թողի, զաւելորդ կրկնաբանութիւնսն յապաւելով՝ եւ զրուն իմաստն պահելով ամբողջ: Զամենայն չարադրութիւնս նիւթոց այսր պատմութեան՝ ոչ գրեցի առանց քաջ խելամուտ լինելոյ հաւաստի ապացուցութեանց նոցին. քաղելով յաղբերաց՝ եւ բաղդատելով ընդ այնպիսի հնութեանց՝ զորոց ստուգութեան ոչ էր մարթ երկբայութիւն ինչ ունել»: (Անդ, նոյն):

Ուրեմն, Տէր Յովհաննանց աներկբայելի կերպով մեզի կը վկայէ, որ Տէր Ստեփաննոս վստահելի պատմական աղբիւր մը չէ, մէկն է անոնցմէ, որ շատ անգամ աւելի կը խառնակեն իրականութիւնները քան թէ ճշմարտապատում կ'աւանդեն:

Ես գիտեմ պիտի տայի, որ զոնէ մեր ծանօթութեան մասին մէջ Տէր Ստեփաննոս ունի ժամանակադրական թնճուկներ: Իր դրածին համաձայն, 1665-ին «առաքեցան» Յակոբ կաթողիկոսի նուիրակները Էջմիածնէն, վեց ամիս ժողովարարութիւն ըրին միայն Սպահան, ի նոր-Ջուղայ: Ասկէ վերջ, անոնք կ'երթան Շիրակ, ուր քառասուն օր կը մնան ու կը վերադառնան Սպահան եւ ասկէ ալ կ'անցնին Փէրիոյ եւ Բուրվարոյ գաւառները, ասկէ կը հասնին «Հաղարջրիպ» գիւղը, ուր ժողովուրդը ցանկութիւն կը յայտնէ վանք մը ունենալու: Դրամ կը հաւաքուի, ժողովուրդին ներկայացուցիչը Սպահան կուղայ վանքին շինութեան հրամանը հանելու, Յակոբ կաթողիկոսին ալ մարդ կը զրկուի վանք շինելու հրամանը առնելու: Դարձեալ 1665-ին կը հիմնարկուի վանքը, որ Բ. (2) Օգոստոս ՌՃԺԵ (1666)ին արդէն վանքն ու դպրոցն աւարտած՝ «բացան դպրոցս»...

Եւ զուգէ հրաջքով այս ամէնը կը կատարուին 1665-էն 1666 Օգոստոս:

Ուշ մնացած եւ ոչ ակնատես կամ ժամանակակից զրոյ մըն է Տէր Ստեփաննոս եւ, ուրեմն, միայն այդքան ալ արժէք ունի:

Այսքանով ալ կ'աւարտի իմ գիտցածս մեծանուն Խօջայ Սարփրազի մասին*): Տէր Յով-

հանեանց կը գրէ:

«Անունդ Սարփրազ՝ ի լեզու Պարսից ըստուգարանի՝ բարձր ի գլուխ ուստի հաւանական է կարծել թէ այս անունը շնորհեցաւ նմա ի յԱրքայէ (ո՞ր) իբրեւ վարձատրութիւն նոյն մեծադործութեանց նոցին»: (56)

* * *

Վերը յիշուած խառնակազմ Ճաշոց-Յայսմաուրը ձեռագրէս կուտամ հոս Սարփրազի վերաբերող յիշատակարանները:

Էջ 4ա. Ա. «Ստացողի դրոցս: Խաւջայ Սարփրազին. եւ կողակցին. Յուլիդէ. որդոցն. Պարոն Վաթանին. Մէլիք աղային. Խաչիկին. Շահնազարին. դստերն. Մամին»:

Էջ 52բ. Ա. «Ստաց(ող) ի դրոցս. Խաւջայ Սարփրազին. եւ կողակցին իւրոյ. որդոցն. Պարոն Վաթանին. Մէլիք աղային. դստերն. Մամին»:

Էջ 57ա. Ա. «Ստացողի դրոցս. Խաւջայ Սարփրազին. եւ կողակցին իւրոյ եւ որդոցն. պարոն Վաթանին. Մէլիք աղային. դստերն. համեստ Մամին. եւ ամենայն աղջականաց նոցին. եւ մեղապարտ զժողիս»:

Էջ 65բ. Ա. նման էջ 4ա. Ա.ին արանց յիշելու իր կողակցին անունը:

Էջ 69բ. Բ. նման է էջ 52բ. Ա.ին, ինչպէս նաեւ էջ 87բ. Բ., 88բ. Բ. ուր կ'աւելցուի «դստերն Մարիամին. համեստ. Մամին»: Իսկ էջ 92ա. Ա. կրկնելով նոյնը կ'ըսուի «դստերացն. համեստ. Մամին»: Իսկ էջ 83բ. Բ. կրկնութիւն է էջ 4ա. Ա.ին, առանց յիշելու կողակցին անունը:

Այսպէս, մեր տրամադրութեան տակ եղած վկայութեանց համաձայն, Խօջայ Սարփրազ ունեցած է կին մը Յուլիդէ անունով, չորս որդիք՝ Վաթան, Մէլիք Աղայ, Խաչիկ, Շահնազար, եւ դուստր մը՝ Մամ (կամ Մարիամ): Վերջին երեքը բոլորովին անծանօթ մնացեր են Տէր Յովհաննանցի, ինչպէս նաեւ Սարփրազի կնոջ անունը:

Հանեանց կը վկայէ որ իրենց տունը ունէին յատուկ եկեղեցի, եւ առանց յիշելու իր աղբիւրը կը բաւականանայ ըսելով որ ձեռագրաց յիշատակարաններու մէջ գտած է:

(56) «Պատ. Նոր Զուլայու», էջ 90:

*) Սարփրազ նախահայրն է Սարփրազեանք կամ Շարփրազեանք գերդաստանին: Տէր Յով-